ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ. ՕԳՈՍՏՈՍ 15, ԹԻՒ 15. ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 136

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգը և իւր գլուխը. Աշգեան, Իզմիրլեան, Օրմանեան.—Թատրոն. Բաֆֆիի "Սալբի" անտիպ գրուածքից մի գլուխ.—Վիճակագրութիւն Ամերիկայի Հայոց.—Այլևայլք.—Հայկական Արշաւանք մը.

ԱԶԳԸ ԵՒ ԻՒՐ ԳԼՈՒԽԸ

ԱՇԸԳԵԱՆ, ԻԶՄԻՐԼԵԱՆ, ՕՐՄԱՆԵԱՆ

Ա

Ազգ մը աւելի կամ նուազ գօրաւոր է իւր առաջնորդին անձնաւորութեանը համեմատ։

Գաղիա Մէրովէնժեան Հարստութեան վերջին այլասեռեալ թագաւորաց ատեն ողորմելի կացութիւն մ'ունէր, բայց երբ Կարոլոսեան առոյգ և կորովի ընտանիքը ի գահ բարձրացաւ, բարձրացուց իւր հետ նաև զԳաղիա և Մեծն Կարոլոս ստեղծեց ահագին կայսրութիւն մը։

Ազգի մը գլուխը ինքն ինչպէս որ է, այնպէս կ'անէ նաև զիւր ազգը։ Համիտ անմիտ և անգութ է, թուրք ժողովուրդն ալ նորա առաջնորդութեամբ եղաւ աւելի անմիտ և անգութ քան երբէք։

Որպիսի է զօրագլուխ մը, այնպէս կը լինի նաև իւր զօրքը։ Մարիոս, Հռովմայեցի մեծ զօրավարը, դժնդակ աշխատանաց մէջ կրթեց իւր գունդերն և տուաւ անոնց այն զօրութիւնը, կարգապահութիւնն ու վստահութիւնն զոր կորուսեր էին մեղկ սովորութեանց մէջ, և այսպէս կարող եղաւ զայնս յաջողութեամբ հանել Կիմբրեան և Տեւտոնեան բարբարոսաց դէմ։

Ընկերակցութեան մը նախագահին հետ կը փոփոխի նաև նոյն ընկերակցութեան ընթացքն և բնաւորութիւնը։ Երբ բանիբուն ղեկավար մը կ'ընտրուի նախագահ, ժողովներն կանոնաւոր և շրջանը արդիւնաշատ կը լինի. ապա կուգայ ապիկար կամ անձեռնհաս յաջորդ մը անոր տեղ, և ահա խռովեալ և անպտուղ շրջան մը կը սկսի նոյն մարմինն։

Բ

Այդքան հզօր է գլխոյ ազդեցութիւնը մարմնոյն վրայ. բայց և այն ճշմարիտ է թէ մարմինն ալ իրեն արժանի գլուխ մը կ'առնու։ Հետևապէս կարելի է բառնաձևը ամբողջացնել և ասել—ինչպէս է գլուխը, այնպէս է մարմինը, և ինչպէս է մարմինը, այնպէս է գլուխը։

Զիագետիին անճոռնի գլուխը իւր անճոռնի և տգեղ իրանին արժանի է, և ա-

ուիւծին վեհ կերպարանը նորա կայտառ և թարեձև իրանին։

Միայն սա կը մնայ ասել իբրև ամբողջացուցիչ վերի օրէնքին թէ ազգ մը, ժողովուրդ մը, ընկերակցութիւն մը կը փոփոխէ իւր տրամադրութիւններն և այդ փոփոխութեանց համեմատ կ'ունենայ իւրաքանչիւր իւր գլուխը։

Ներսէս Վարժապետեանի մահէն յետոյ՝ մեր ազգը յուսախաբ և կասկածոտ էր, ուստի և ունեցաւ Աշըգեանի պէս թոյլ և ապիկար պատրիարքներ։

Սասնոյ ջարդէն յետոյ թոյլ ազգին վրայ բարոյական ոյժ եկաւ, ըստ մասին արտաքին միջամտութեան մը յուսով և ըստ մասին արդար զայրութի մը շնորհիւ ընդդէմ թուրք կառավարութեան։ Ազգն ահա այդ կորովի և քաջ տրամադրութեանն մէջ ընտրեց կորովի և քաջ գլուխ մը—զՊատրիարք ԻԶՄԻՐԼԵԱՆ։

Դժբաղդաբար թէ ազգը և թէ իւր պատրիարքն չարաչար խաբուեցան թրքէն ինչպէս և Եւրոպայէն. տեսան ամենազարհուրելի ջարդեր երբ կը յուսային ողջունել վիճակի տևական բարւոքում մը, և սրտաբեկ ու վիրալից ինկան դրեթէ դիտապաստ։

Բոլորական ցրօնքի և ջնջման ահիւ դողդոջուն և թուլցած վիճակին մէջ, ուր միայն շնչել կ'ուզէր ու սպասել անմռունչ, ազգն իրեն գլուխ ընտրեց զՕրմանեան։ Ահաբեկ ազգը ուրիշ բան չի սպասեր իւր գլխէն բայց միայն սպասողական դիրք մը քաղաքականօրէն, կասկուսի և առերևոյթ հաճոյակատարութեան քաղաքականութիւն մը հանդէպ Մարդասպանին, միանգամայն ազգին անթիւ վէրքերուն փութաջան դարման։ Անոնք որ Լրագրոց մէջ կը դատափետեն զՕրմանեան, ազգային հոգեբանական երևոյթներուն քիչ ուշադրութիւն ընծայող գրիչներ են. Օրմանեանի պէս մէկու մը ընտրութիւնն բնական էր այդ պայմանաց մէջ. կարելի է ասել սարսափահար ազգին բընազդական ընտրութիւնն էր այն։

Ազգային պաշտօնեայ մը պէտք է իւր պաշտօնին յարմար բնաւորութիւն ունենայ։ Օրինակ առնունք ռուսական երկու դեսպաններ, զՆէլիտոֆ և Զինովիէֆ։ Այն բոլոր միջոցին երբ ռուս կառավարութիւնն անուշութեամբ վարուիլ կ'ուզէր Համիտի հետ, և ջերմ պաշտպանի դերն կատարել, գործիչ ունեցաւ զՆէլիտոֆ, այր օձաբնոյթ և մեղրաբան։ Բայց այժմ նմա յաջորդ կուգայ Զինովիէֆ, որ խիստ խօսելու վարժ և խայթելու կարող մարդ է, և բնական յարմարութիւն ունի դիւանագիտական յարաբերութեանց սպառնալից ձգտում պատճառելու երբ պէտքն զգացուի։

Ազգային բնազդումն ալ մեր մէջ յաճախ կատարած է փափուկ դիւանագիտութեան գործ։

Ազգի մը, ինչպէս անհատի մը, հզօրագոյն բնազդն՝ կեանքը պահպանելու բնազդն է։ Մեր ազգին այսքան երկարակեցութեան պատճառն ալ այդ է թէ ամենավտանգաւոր կացութեան մէջ գիտցած է պահպանողական բնազդմամբ խոյս տալ վերջին մահացու հարուածէն։

Անասնաբանութեան մէջ ալ ասոր օրինակն կը տեսնուի։ Հզօրագունէն հալածուած կենդանին յաճախ կ'իյնայ իբրև մեռեալ և կը պրծի թշնամւոյն հետապնդութենէն։ Երբեմն կը կարծուէր թէ կեղծ էր անկումն և մեռեալ ձևանալն, բայց այժմ հաստատուած է թէ արդարև խեղճ կենդանին յոգնութենէն և սարսափէն նուաղելով կ'իյնայ։

Դորա նման երևոյթ մը կ'երևի հզօրագունէն ընդ երկար հալածուած ազգի մը վրայ ալ։ Մեր հէգ ազգը դարերով պահպանած է իւր գոյութիւնը շնորհիւ այդ երևութին, այսինքն, քաղաքականապէս մեռած երևնալով Օսմանեան Գազանին։

Քաղաքական ձգտման խլրտումներ տեսնուելով այդ մեռեալ կարծուածին վրայ, Գազանը իւր ժանիքներուն մէջ առաւ զայն վերջին տարիներս և ամենայն կատաղութեամբ փեռեկեց զայն։

Հիմա այդ փեռեկեալ ազգը նորէն քաղաքականապէս մեռեալ կ'երևի, և որքան աւելի վստահ լինի Գազանը թէ հարուածը մահացու էր, այնքան նուազ կանոնաւորապէս պիտի հսկէ ու նեղութիւն տայ իւր զոհին։

Մեր ժողովուրդը չի փիլիսոփայեր հարկաւ, այլ կը վարուի բնազդմամբ մը որ խորին քաղաքագիտութիւն կը պարունակէ։

Արդ, ժողովրդին այս վիճակին մէջ, և ցորչափ չկայ վստահելի յեցակէտ մը ուրուն կռթնելով ոտքի ելնել փորձէ, մեծ տխմարութիւն կ'անեն անոնք որ խրոխտ ընթացիւք կամ սնամէջ քաջութեան խօս-

քերով կ'ուզեն խանգարել ազգային բնազդումը և թշնամւոյն հալիւ զիջանելու միտած փրփրալից կատաղութիւնը նորէն բորբոքել։

Ցայսպիսի անմտութիւն միտոյները, եթէ կան, Թուրքիայէն դուրս են, Թրքահայոց հանրային զգացմանց անհաղորդ և աննկատ թեթեւամիտներ։

Ցաւալի է եթէ կան։ ես զայրութիւ կարդացի հետեւեալ հեռագիրը։—«Հայ յեղափոխականներ կը պատրաստուին եղեր պարսկական սահմանագիծն անցնիլ։»

Չեմ ուզեր հաւատ ընծայել այդ հեռագրի, որ կրնայ Թրքի չինածն լինել, բայց և այնպէս, նկատելով վերջին ամաց մէջ մերայնոց ոմանց կողմանէ ցոյց տրուած ծայրագոյն անմտութիւնը, կը վախեմ։

Այս դիտողութիւնը հարկաւ բողոքի տեղի կուտայ անոնց կողմանէ որք իրենք զիրենք մեծ յեղափոխական գործիչներ կամ այդ գործիչներու հետեւող կը համարին։ Դոցա համոզմամբ իմ խօսքերս յուսահատեցուցիչ են ազգին։ «Թմրութիւն, մեռելութեան երեւոյթ ջատագովելով՝ դու արդարացնում ես Թուրք լուծին ներքև համբերութեամբ մնալ ուզողներին,» պիտի ասեն։

Զիս մեղադրողներն զիրենք «Բաֆֆին պաշտողներ» կը հռչակեն և մին այդպէս ստորագրած էր իւր դերբանական մէկ նամակն առ իս։

Պարո՛ններ, դուք շատ կը սխալիք և յայդմ—այսինքն՝ կարծելով զձեզ Բաֆֆիի աշակերտ և պաշտող։ Դուք զԲաֆֆի սխալ կը հասկնաք, և անոր նպատակն չարաչար կերպով ի գործ դնել կ'ուզէք։

Եթէ անկեղծութեամբ մտիկ անել յօժար էք, բացատրեմ ձեզի զայս։

Գ

Նախ յուշ բերենք սա կարեւոր դիտելիքն թէ մեր ազգին աղատութեան համար երեք կարգի գործիչներ պէտք են։

Առաջինը, ժամանակագրական կարգաւ, է գրողն, բանաստեղծն ու վիպասանն, որք ազատութեան սէր կ'արծարծեն ժողովրդին մէջ։ Նալբանդեան, Պատկանեան, Բաֆֆիի այդ կարգին կը պատկանէին։ Նոքա բռնութիւնը ատելի և ինքնապաշտպանութեան պարտքը քաղցր ընծայել աշխատեցան ստրկացած Հայաստանեայց։

Գրողաց կարգէն յետոյ կուգայ քաղաքագէտ ու դիւանագէտ գործիչը։ Սմանկ է ազատութիւնը ձեռք բերելու քաղաքական և դիւանագիտական միջոցներն ուսումնասիրել, գործնական ծրագիր մը յղանալ, երկնել։ Զայդ արաւ Քավուռ Իտալիոյ համար, Պիզմարք՝ Բրուսիոյ համար։

Վերջապէս կուգայ նաև զինուորական հանճարն, Կարիպալտի մը, Մոլթքէ մը որ ի ծայր սրոյ կը բանայ ճամբան, ի գործ կը դնէ քաղաքագիտին ծրագիրն։

Այս երեք կարգի գործիչներուն պաշտօններն ալ ազնիւ ու նուիրական են, բայց ամենէն դժուարն երկրորդինն է, քաղաքագիտինը։ Գրողը լոկ խորհող մ'է, յաճախ գործնական քաղաքականութեան մը ընդունակութենէն զուրկ, և եթէ դժբաղդաբար գործի ասպարէզն իջնէ պարագայից բերմամբ, անյաջող կը հանդիսանայ։ Պատկանեան և Բաֆֆի լոկ գրողներ էին և իրենց դերէն դուրս չելան։

Ռուսահայ հայրենասէրներու քով յիշել պարտինք Թրքահայերունն ևս։ Սոցա մեթոտն այլէր։ Ռուսինեան, Օտեան և ընկերք ուզեցին տալ հայ ժողովրդին նախապատրաստական կրթութիւն մը ինքնօրէն վարչութեան և արդարև իմացական գերազանցութեան յարելով գործնական իմաստութիւն մը՝ Սահմանադրութիւնը ձեռք բերին ազգին համար։ Սահմանադրութիւնը մեծ և անգնահատելի շահ մ'էր Թրքահայոց, և ես այս Թրքահայ հայրենասէրներու յիշատակը ոչ նուազ խորագոյն սքանչանօք կ'օրհնեմ քան զՌուսահայոցն։

Վերջապէս եկաւ Ներսէս Վարժապետեան որ ռուսընդթուրք պատերազմէն յետոյ, ինքնօրինութեան խնդրոյն աւելի մօտեցաւ, դիմելով դիւանագիտական միջոցներու։ Արդիւնքն այն եղաւ որ փոխանակ ինքնօրինութեան աւելի կատարելագործեալ դրութիւն մը ստանալու՝ Սահմանադրութիւնն ալ, անոր նախապատրաստականն, վրայ տուին։

Ներսէս խաբուեցաւ ինչպէս անկէ 10 տարի յետոյ պիտի խաբուէր Իզմիրլեան։

Ներսէսի պատրանքը զարմանալի չէ։ Նորա գործ աւելի դժուար էր քան զՍահմանադրութեան հեղինակներունը, ինչպէս սոցա գործը աւելի դժուար էր քան զռու-

սահայ գրողներունը:

Ներսէսի պարտութենէն յետոյ ազգին խորհող մասը համոզուեցաւ թէ պէտք էր շարունակել լռիկ նախապատրաստութիւնը, ընդհանուր կրթութեան ջանքերն։ Արծրունի յարատեւեց հանրային գործերն ու գործիչներն ողջամիտ սկզբունքի հպատակեցնելու պայքարը։

Եւ ահա քանի մը կովկասցի երիտասարդներ, Եւրոպիոյ համալսարանի մը շուրջը քանի մը տարի թափառելէ և ընկերվարական ու ոչնչեան կամ նիհիլիսդ փախստականներու հետ շփուելէ յետոյ՝ ձեռնարկել յանդգնեցան ազգային ազատութեան ահագին գործոյն, գործ որ աւելի դժուար էր քան Բաֆֆիներու և Արծրունիներու, քան Օտեաններու և Ռուսինեաններու և Ներսէսներու գործը, բայց Նազարպէկեան և իւր ընկերք, այն իմացական հսկաներու քով հազիւ նշմարելի գաճաճներ, Հնչակ անուն փոդն հնչեցին, և հրապուրելով զպարզամիտներն ի խաղ յեղափոխական՝ զրովանդակ ազգն արին խաղք ու խայտառակ։

Հայ ազգը իւր գոյութեան բազմադարեան ընթացքին մէջ երբէք ունեցած չէր դոցա չափ անբնական և անմիտ առաջնորդներ։

Ազգին մեծագոյն բնազդն է կեանքը պահպանել. Նազարպէկեաններու մեծագոյն գործն եղաւ ազգն ջարդուելու հրապուրել։

Ազգին գլուխներուն բնազդն եղած է միշտ պատմական պարագաներուն ուշադիր լինիլ և ըստ այնմ սպասե՛լ կամ շարժիլ, Նազարպէկեաններ յանդգնեցան պատմական պարագայներու թելադրութեանց ճիշդ հակառակը փորձել։

Դոքա ԺԹ դարու լուսաւոր որդիք կը կարծեն զիրենք, բայց աւելի կոյր են քան մեր հին դարուց ազգային առաջնորդներն։

Երբ Հայք, 518ին նախ քան զԲր., ապստամբեցան Դարեհ Վշտասպի դէմ, ուրիշ ութ երկիրներու հետ համաձայնած՝ միասին ելան ոտքի։

Երբ 190ին Ն. Ք. զԲր. ապստամբութեան դրօշ պարզեց Հայաստան, և յաջողեցաւ ինքնօրէն պետութեանց կարգն անցնիլ, յաջողեցաւ վասն զի 400 տարի սպասած էր պատեհ պատմական պարագայից, զոր տեսաւ յայնմ զի Մեծն Անտիոքոս ծանր պարտութիւն մը կրած էր Հռոմայեցւոցմէ և բոլոր արևմտեան Ասիան կը բորբոքէր։

Երբ մեր Տիգրան Մեծ աշխարհակալութեանց փորձն արաւ, ընտրեց այն տարիներն երբ Հռովմայեցիք Միհրդատով զբաղած էին և Պարթեւք իրենց ներքին խռովութեամբք (85—74 Ն. Ք. Ք.), անո՛ր համար յաջողեցաւ հայկական կայսրութիւն մը ստեղծել հզօր և ընդարձակ։

Երբ 400 տարուան թշուառութենէ յետոյ՝ Թ դարուս, մեր Բագրատունեաց թագաւորութիւնը հիմնարկուեցաւ, դարձեալ պատմական պարագաներէ օգտուելով էր, զի Արաբաց Խալիֆայութիւնն ասի և Բիւզանդիոնի կայսրութիւնն անտի՝ տկարացած էին։

Եւ մեր օրերը, երբ Ներսէս Վարժապետեան Հայաստանի համար պարկեշտ չափով ինքնօրինութիւն մը ձեռք բերել փորձեց, նոյնպէս պատմական պարագաներէ առաջնորդուելով փորձեց։ Պատերազմ եղած էր յանուն Սուլթանի քրիստոնեայ հպատակաց, և Ներսէսի դիմումներն արդարացնող առիթներ կային։ Այդ է պատճառ որ Ներսէսի դիւանագիտութեան անյաջողութիւնը չենք կրնար մեղադրել։

Բայց կը մեղադրենք, կը դատապարտենք Հնչակեանց ձեռնարկը, վասն զի այն փորձուած է ո՛չ շնորհիւ այլ ի հեճո՛ւկս պատմական պարագայից։ Ներսէս Ռուսիոյ հետ մասնակի հասկցողութեամբ մը սկսաւ ձեռնարկը, իսկ Հնչակ՝ հակառակ Ռուսիոյ ազդարարութեանց։ Ներսէս քիչ մը ի՛նքնօրինութիւն խնդրեց երբ Սուլթանը յաղթուած ու նկուն եղած էր, Հնչակ ազատութիւն պահանջեց երբ Համիտ հըպարտացած ու լրբացած կը խաղցունէր Տէրութիւններն։ Ներսէս պատերազմէ մը վերջը աշխատեցաւ, Հնչակ պատերազմ մը յառաջ բերել ուզեց։ Ներսէս պատեհ ժամը գտաւ, Հնչակ պատեհ ժամը ժամանակէն առաջ հասցնելու ջանաց. կէս գիշերին հրամայեց արեւուն որ ծագի Հայոց վրայ և զազգն մոլորցնելով գահավիժեց ի խորխորատ։

Դժոխատո՛ւր հանճար Հնչակի։

Դ

Այս նիւթին վրայ քանի մը կարևոր կետեր վերապահելով ուրիշ թուոյ մը, չափազանց չերկարելու համար զներկայս, կը խնդրեմ ուշ դնէք սա եզրակացութեանց—

—Մեր ազգին ներկայահաւոր կացու-

թեան գլխաւոր պատճառ մը Հնչակեանց կոյր առաջնորդութիւնն է: Մեր ազգին նման խեղճ, տկար, առանց օտար բարեկամի, ցրուած, աղքատ, Եւրոպայէն հեռի, բարբարոսներէ շրջապատուած ժողովրդի մը համար քաղաքական առաջնորդի դերը ամենափափուկ է և կը պահանջէ ծայրագոյն իմաստութիւն: Աւ՛աղ, ազգին մէջէն ամենէն քիչ ազգայինոգի և ոչինչ պատմական հասկացողութիւն ունեցող Հնչակը եղաւ առաջնորդ:

—Եւ ատկէ կարելի է հետևցնել թէ մեր մէջ որքան խակ է դեռ հանրային իմաստութիւնը որ Հնչակի հետևողներ այնքան գտնուեցան, ու, յետ այնքան աղետից, դեռ իրենք զիրենք Հնչակեան կոչելու համարձակութիւնն ունեցողներ կը գտնուին:

—Ազգին համար ամօթոյ պատճառ մը պէտք է նկատել և զա՛յն՝ որ քանի մը զօրաւոր անհատականութիւններ չկրցան ի պատեհ ժամուն միանալով, հարուածել Հնչականութեան աղետաբեր ազդեցութիւնը:

—Վերջապէս, հարկ է ստեղծել մարմին մը որ ազգին բնական և զգացակից գլուխը լինի և ղեկավարէ նորա շարժումները այսուհետև ըստ պատմական առիթներու պահանջմանց:

ԹԱՏՐՈՆ

ՐԱՖՖԻԻ «ՍԱԼԲԻ» ԱՆՏԻՊ ԳՐՈՒԱԾՔԻՑ ՄԻ ԳԼՈՒԽ:

(«Հայքի» յղուած)

Վարագոյրը բարձրանում է. թատրոնական բեմը ձևացնում է մի սքանչելի տեսարան, որ պատկերացնում էր Ծերունի Հայաստանը իւր տխուր և տրտում կերպարանքներով: Հեռուն հսկայի նման կանգնած է Արարատ սարը. Նրա չորեքկողմում տեսանելի են քանդուած քաղաքների և գիւղօրայից աւերակներ, որոնց վերայ տիրում է յաւիտենական խաւարի թագաւորութիւնը: ՇԻՆՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ միայնակ թռչում է այդ մահահրաւէր տարածութեան վերայ: Երկար թռչելուց յետոյ նա նստում է աւեր Հայաստանի փլատակների վերայ. նա սկսում է մտածել ... Նա մտածում է նորա միւսանգամ շինութեան մասին:

Ցատակագիծը ծրագրվում է, նիւթը պատրաստվում է. Ոգին կամենում է ձգել շինութեան հիմքը: Երևան են լինում չորս մանկահասակ հերոսներ: Նոցա ամեն մէկը բերում է մի ահագին քար, դնում է լինելով շինութեան յատակագծի մօտ, ասելով. «Ահա՛ շինութեան անկիւնաքարը, դորա վրայ պիտի դրուի հիմքը:»

Այդ քարերը ունէին զանազան գոյն և զանազան ձևեր: Նորանցից մինի վերայ գրուած էին խօսքերս—Աւետարանական կրօնական Կեանք: Միւսի վերայ—Դպրոցներ կամ Իմացական Կեանք: Երրորդի վերայ—Հող կամ Նիւթական Կեանք: Չորրորդի վերայ—Թագ և Գաւազան կամ Քաղաքական Կեանք:

Ոգին կամենում է ձգել հիմքը: Հերոսներից ամեն մինը իւր քարը յառաջ է մղում, պահանջելով, թէ նա պիտի լինի գլխաւոր անկիւնաքարը: Բարձրանում է վէճ և աղմուկ: Նոքա սկսում են միմեանց դէմ հակաճառել: Շինութեան գործը մնում է անշարժ:

Մինչ դոքա այդ խռովութեան մէջ էին, երևան են լինում հերոսների մի նոր խումբ, սև հագուստներով, երկայն մօրուքներով և կատաղած ու փրփրած բերաններով: Նոքա գլորելով բերում են մի ահագին անտաշ քար, յաւիտենական հընութիւնից սևացած և բորբոսած, որոյ անհարթ մակերևոյթի վերայ հազիւ կարդացվում է բառս՝ Խաւար կամ Մեռելային Կեանք:

«Կորէ՛ք լակոտնե՛ր, գոռացին նոքա դէպ առաջին չորս մանկահասակ հերոսները. յաւիտենից այդ աւերակների հիմքը դրուած է եղել այդ «սրբազան քարի վերայ, դարձեալ նորա վերայ պիտի հաստատուի նորոգ շինութիւնը:»

Մանկահասակ հերոսները ընդդիմանում են նորանց: Կռիւը և խռովութիւնը սաստկանում է: Շինութեան Ոգին յուսահատուելով աներևութանում է:

Նոցա խռովութեան աղաղակի ձայնը հասնում է երկինք, դիք իջանում են ցած. Արարատայ գագաթի վերայ ատեան է կազմվում:

Երկայն մօրուքաւոր ծերերի բողոքը հասնում է մինչ տարտարոս. անդունդը աց է լինում. յանկարծ երևան է լինում

բ

իւր ստորերկեայ խումբերով, մահու և խաւարի թագաւորը, սարսափելի Պլուտոնը։

Ծերունիքը ուրախութեամբ դիմում են իւրեանց պաշտպանի առաջ և տարածվում են նորա ոտքի տակ և գետին են համբուրում։

«Կորէ՛ք, անիրաւնե՛ր, գոռում է խաւարի թագաւորը դէպ մանկահասակ հերոսները. դուք, լիրբ լակոտնե՛ր, մարտնչո՞ւմ էք իմ իշխանութեան դէմ։ Ես ինքս իմ ձեռքով դուրս հանելով տարտարոսի կամարներից երկու քար, ձգեցի աշխարհ. մինը անցաւ Արաբիայում, որոյ վերայ դրուած է այժմ Մեքքայի Սրբարանի հիմքը, և միւսը Հայաստան, որոյ վերայ յառաջ դրուած էր և այժմ Նոյնպէս պիտի դրուի Նորա շինութեան հիմքը։

Մինչ Պլուտոնը բարկացած կամէր իւր Երեքարկէնի հարուածով գլորել չորս հերոսները դէպ անդունդ, յանկարծ Հերմէսը վերայ է հասնում և հրաւիրում է նորան Արարատ, ուր դիք խորհուրդ ունէին և նորան սպասում էին։

Քանի բոպէից յետոյ յայտնվում են Ապոլոնը և Աթենասը։ Նոքա կարդում են դից վճիռը, որով սև զգեստաւոր ծերունիքը դատապարտվում են դէպ յաւիտենական կորուստ, իսկ չորս մանկահասակ հերոսներին ասում են. «Դուք չորեքեանքդ միմեանց եղբայր էք, ձեր չորս քարերը պիտի դրուին չորս անկիւններում և նոցա հիմքի վերայ պիտի բարձրանայ շինութիւնը։»

Երևան է լինում դարձեալ շինութեան Ոգին։ Եւ Վարագոյրը ցած է իջնում։ Թատրոնի մէջ հնչվում են ծափահարութիւններ և «կեցցէ՛ յաղթութիւն» —«կեցցէ՛ նոր սերունդ»։

ՐԱՖՖԻ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Ժ. ՊԻՆԿԱՄԹԸՆ, Binghamton, N. Y.

Հոս կան Հաճընցի երկու ընտանիքներ. Տէվիրեան, 6 անդամով, և Կէրթմէկեան՝ երեք. գումարը 9։

ԺԱ. ՖՕԼ ՐԻՎԷՐ, Fall River, Mass.

Տիար Կաֆարեան կը գրէ մեզ.

Հոս կան 70 երիտասարդ, երեք կին—Էլմաս Արզումանեան, Թուրվանտա Փափազեան, Տըպագոն Զորտիկեան—և երեք մանուկներ. մին աղջիկ, երկուքը՝ մանչ։

ԺԲ. ՍԷՆԹՐԼ ՖՕԼՍ, Central Falls, R. I.

Հոս կան 72 Հայեր, բոլորն ալ այր մարդիկ։

ԺԳ. ՆԷՇՈՒԱ, Nashua, N. H.

Մեր տեղւոյս գաղթականաց թիւը 70 է, որոնց 11ը կիւրինցի են, մնացեալք Խարբերդու Խուլլու գիւղէն։

ԺԴ. Manchester, N. H. կան 28 Հայեր, ուրեմն Նիւ Հէմշիրի Հայոց բոլորական թիւը 98 է։ Կ. Ց. Պ.

ԺԵ. Newburyport, Mass.

Տեղւոյս Հայերն 34 այր և 2 կին են, 3 զաւակներով։ Ս. Մ.

ԺԶ. ՎԻՐՃԻՆԻԱ ՆԱՀԱՆԳ, VIRGINIA.

Նահանգիս Ռիչմոնտ (Richmond) քաղաքում կան 5 Հայ, Նորֆոքում (Norfolk) 2, Նիւ Փորթում 6, ամենուս գումարը 13 է։ Ասոնց 10 հոգին Ակնցի են։ Մէկը ընտանիք է, Ակնցի Խաչատուր Մազմանեան, որ ունի երկու որդի և երկու դուստրը։

Բաց ի վերոյիշեալներէ, Վիրճինիա նահանգիս այլ և այլ գաւառներուն մէջ կան գաղութներ 2—5—10 անձերէ բաղկացեալ, ինչպէս կ'իմանամ այս կողմերը թափառող Սիւրիացի փերեզակներէ, բայց չեմ տեսած և չեմ գիտեր թէ որ քաղաքներն են։ Ա. Տ.

ԺԷ. ԷԼՄԱՅՐԱ, Elmira, N. Y. Երկու ընտանիք, 8 հոգի. միւսը 2 հոգի, կինը Ամերիկացի. ուրեմն բուն Հայ, ինը հոգի։

ԺԸ. Attleboro, Mass.

Հոս կանք մեծ ընտանիք մը, 11 հոգիէ բաղկացեալ, Թուրքիայէն եկած՝ 5 ամիս առաջ։ Կան նաև երեք երիտասարդներ, մին Ատաբազարցի, միւսն Տիգրանակերտցի և երրորդն Խարբերդցի։ Ամենքս ալ jewelryի գործարանին մէջ կ'աշխատինք։ Ց. Հ.

Ստացած ենք նաև հետևեալ թիւերը
Syracuse, N. Y.—11 Հայ
Austin, Texas—2
Galveston, Texas—2
Madison, Maine—4
Wisconsin նահանգում ցրուեալ 15։

ՅԱԼ ԵՒ ՅԱԼՐ

Սուլթանը նաւային Մասնաժողով մը, իւր նախագահութեամբ, կազմակերպեր է, որոյ նպատակն է արդի գաղափարաց համաձայն վերաշինել Օսմանցւոց ծովային ուժերը:

Կ. Պոլիս, Օգ. 1—Ալպանիացիք եօթը Սերպիական պահականոցներու վրայ միանգամայն յարձակած են: Սերպ կառավարութիւնը ձեւական բողոք մ'ուղղած է Տէրութեանց: Կը կարծուի թէ ասիկա զՍերպիա գրգռելու ծրագրի մը մասն է:

Վանէն լուր եկած է թէ հայ յեղափոխականք պարսկական սահմանագլուխն ադին անցնիլ կը պատրաստուին:

Վերջերս պատուաւոր Թուրքեր խորհրդաւոր կերպով աներեւոյթ եղած են ի Կ. Պոլիս, և զրոյց կը շրջի թէ վաթսուն հոգի, որք ազատական Թուրք գործիչներու հետ ի յարաբերութեան լինելու կասկածի տակ էին, գաղտնի ոստիկանութեան ձեռքով վերցուած են ի միջոյ:

Ահմէտ Բիզա, Մէշվէրէթ լրագրոյ խմբագիրն ի Բարիզ, դատի կանչուած է՝ զՍուլթանն նախատած լինելու ամբաստանութեամբ: Մ. Բլէմանսօ երևցած է իբրև Ահմէտ Բիզայի վկայ, և յայտարարեր է թէ ինքը կը գարմանայ Մէշվէրէթի չափաւորութեան վրայ, և ապա ոկսեր է Սուլթանին դէմ որոտալ՝ կոչելով զայն վատ և մարդասպան: Առ այս ունկնդիրք ծափահարեր են, և դատաւորը չէ արգիլեր:

Էնդռանզիժանի խմբագիր Հանռի ԹոշՀՓօռ գրաւորապէս տուեր է իւր վկայութիւնը՝ թէ Սուլթանը զՋիա Փաշա յղած էր զինքը կաշառելու, որ և յայտներ էր իրեն թէ Գերմանիոյ կայսրը 240,000 լիրա կաշառք ընդուներ է Համիտէն:

Փաստաբան Լապատի ամբաստանելոյն կողմէն պերճաբանօրէն խօսեր է երկու ժամ, շարունակ Սուլթանին դէմ գոռալով և ունկնդրաց կողմէն ծափահարուելով:

Ամբաստանեալն յանցաւոր կը դատուի վերջապէս, բայց դատարանը կը յայտարարէ թէ Մէշվէրէթի ընթացքը կը բացատրուի այն համաշխարային զայրութով որ գրգռուած է հայկական ջարդերուն պատճառաւ: Ուրեմն դատաւորը 60 ֆրանքի տուգանքի մը կը դատապարտէ զԲիզա և Նորա օգնական խմբագիրը, զոր պիտի վճարեն եթէ նորէն գործեն նոյն յանցանքը.

Այս որոշումը կ'ընդունուի ծափիւք և «Կեցցէ՛ Ֆռանսա», «Անկցի Սուլթանը» աղաղակներով:

Ֆռանսական օրինօք օտար վեհապետաց նախատիչները ենթակայ են երեք ամսուընէ մինչև մէկ տարի բանտարկութեան և առ առաւելն 3,000 ֆռանք տուգանքի:

Կ. Պոլիս, Օգ. 5—Թուրք կառավարութեան պաշտօնեայք հիմա փափաք կը ցուցնեն խաղաղութեան բանակցութիւններն ի գլուխ հանելու, որովհետև Թեսաղիոյ մէջ զօրքերը ապառողջ են և շատ մահեր կը պատահին, և այն քաղաքական պատճառաւ ևս որ Պուլկարիոյ, Սերպիոյ և Մոնթէնէկրոյի կացքը սպառնալից կը նկատուի:

Տիար Աւետիս Թիւֆէնքճեան Օգ. 8ին ամուսնացեր է ընդ Օրիորդ Մ. Ազնիւ Գալստեանի, ի Լին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔ ՄԸ

Կ. Պոլսէն Օգ. 9 ին կը հեռագրեն թէ պաշտօնական Հեռագիր մը ստացուեր է անդ ծանուցանող թէ Օգ. 6ի ուրբաթ Օրն քանի մը հազար Հայ յուզիչներ Պարսկաստանէն արշաւած են ի Թուրքիա: Սպանած են Մէկրիքի ցեղէն 200 հոգի, ի միջի որոց կիներ և մանուկներ: Ցեղապետին կինը սաստիկ տանջանօք մահացուցեր են, և այլ միքանիներու քթերն ու ականջուին կտրեր են:

Իշխանութիւնք միջոց ձեռք առեր են աւազակները բռնելու, և Վանի վիլայէթին մէջ ամեն պատահականութեան համար պատրաստի գտնուելու:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ Հայոց և Թուրքիոյ վրայ հետաքրքրական գիրք մ'ևս, անգլիերէն լեզուով:—

IMPRESSIONS OF TURKEY.
During twelve Years' Wanderings.
By
W. M. RAMSAY, D. C. L., LL. D.
Professor in Aberdeen University.
New York, G. P. Putnam's Sons.
1897. pp. 296. Գին $1.75.

ԱՆԳԼԻԵՐԷՆ ՀԱՅԳԻ ՄԱՍԻՆ

Անգլիերէն ՀԱՅԳԻ հրատարակութիւնը կախակայուած է տնտեսական պատճառներով։

Ա. եւ Մ. ԳԻՐԱԿԻՕԶԵԱՆ

71 WALL STREET

NEW YORK

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկւով փոխանակագիր Կ. Պոլսոյ վրայ։ Քաղաքէն հեռու գտնուողք կարող են դրամը ղրկելով փոխ-գիրը ստանալ։

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի։

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Մենտոր Անգլիերէն Լեզուի

Աշխատասիրեաց և հաւաքեց
Տիգրան Մ. Պետիկեան
Նիւ Եորք, 1897։

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիերէն ու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ։ Եօթը հազար բառ կայ։

Դինն է 50 սենթ կամ 2½ ֆրանք։

Դիմել առ ՀԱՅԳԻ խմբագիրն
341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղողին գիրք չենք կրնար յղել։

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

ԿՈՒՏՅԻ ՄԱՍԻՆ

SIEGEL · COOPER Co.

SIXTH AVENUE 18th & 19th STS. NEW YORK.

Պատիւ ունինք յարգոյ Հայ հասարակութեան ծանուցանել թէ մենք վերոյիշեալ տիեզերահռչակ մեծ վաճառատան առաջին յարկին վրայ յատուկ տեղ մ'ունինք ուր արուեստական ակռաներ կը շինենք ու կ'ընծայենք մեր յաճախորդներուն, թէ հատով, թէ վերի շարքը ամբողջ, թէ վերի ու վարի ծնօտներու ակռաները միասին։ Մեր շինածը ամենալաւ, ամենադիմացկուն տեսակէն է։ Այն Հայ Տիկինները ու Պարոնները որ անգլիերէն լաւ չեն խօսիր, պիտի գտնեն մեր քով դիւրութիւն, վասն զի մեզի օգնական ունինք հայ ատամնաբոյժ մը։ Վերի ծնօտի ամբողջ շարքը ութ տոլարով կը շինենք, վարինն ալ ութ տոլարով։ Մեր գները յոյժ չափաւոր են, ու գործը յոյժ ընտիր։

E. P. HAYES, D. D. S.

ԲՐԻՐԵՏԵԱՆ ԱՐՀԱՐԱՆ

եւ ՀԻՒՐԱՆՈՑ

14 Market St., Worcester, Mass.

Այս է ճաշարան և հօթէլ միանգամայն, ուր ուղեւորներ կրնան օթեւանել, գիշեր մը կամ օրերով, և հայկական ընտիր կերակուրներ ուտել, յոյժ դիւրամատչելի գներով։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԻՒՖԷՆԲՃԵԱՆ
ճաշարանապետ և հիւրանոցի տեսուչ։

ՀԱՅԲ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Տարեկան բաժնեգինն է կանխիկ երկու տոլար (տասն ֆրանք)
Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ